Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2018 թ.
օգոստոսի 13 -ի N 1073 - Լ
որոշման

# Կ Ա Զ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | ՀՀ փոխվարչապետ |
| Հանձնաժողովի անդամներ | ՀՀ վարչապետի խորհրդական |
| | ՀՀ առողջապահության նախարար |
| | ՀՀ արդարադատության նախարար |
| | ՀՀ արտաքին գործերի նախարար |
| | ՀՀ կրթության և գիտության նախարար |
| | ՀՀ մշակույթի նախարար |
| | ՀՀ պաշտպանության նախարար |
| | ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար |
| | ՀՀ սփյուռքի նախարար |
| | Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավար (համաձայնությամբ) |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
օգոստոսի 13 -ի N 1073 - Լ
որոշման

# Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության վարչապետին կից պետական պարգևների և պատվավոր կոչումների շնորհման հարցերի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործառույթները, գործունեության կազմակերպման, աշխատակարգային որոշումների և խորհրդատվական եզրակացությունների ընդունման կարգը:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքով և սույն աշխատակարգով:

## II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

3. Հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության վարչապետին տրամադրում է Հայաստանի Հանրապետության վարչապետի՝ պետական պարգևներով պարգևատրելու կամ պատվավոր կոչումներ շնորհելու նախաձեռնության և «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» օրենքով սահմանված անձանց կամ մարմինների կողմից ներկայացված պետական պարգևների կամ պատվավոր կոչումների շնորհման առաջարկությունների վերաբերյալ խորհրդատվական եզրակացություն:

4. Հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը, իրենց պարտականությունները կատարում են հասարակական հիմունքներով:

5. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.

2) հաստատում է հանձնաժողովի նիստերի օրակարգը.

3) ստորագրում է հանձնաժողովի աշխատակարգային որոշումները և խորհրդատվական եզրակացությունները.

4) հանձնաժողովի նիստերին հրավիրում է այլ անձանց.

5) անհրաժեշտ տեղեկատվություն և փաստաթղթեր ստանալու նպատակով հարցումներ է ուղղում պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին և անձանց.

6) իրականացնում է հանձնաժողովի ընթացիկ գործունեության ղեկավարմանն ուղղված այլ գործառույթներ:

6. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է իր կողմից որպես փոխարինող նշանակված հանձնաժողովի անդամը, իսկ դրա անհնարինության դեպքում՝ հանձնաժողովի տարիքով ավագ անդամը: Հանձնաժողովի նախագահին փոխարինող հանձնաժողովի անդամի ձայնը քվեարկության ժամանակ հաշվարկվում է միայն որպես հանձնաժողովի նախագահի ձայն:

7. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի նիստերին և դրանցում անցկացվող քվեարկությանը.

2) հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ զեկուցում է հարցը և քվեարկության ներկայացնում խորհրդատվական եզրակացության նախագիծը.

3) կատարում է սույն աշխատակարգով նախատեսված այլ գործողություններ:

## III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

8. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

9. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են և խորհրդատվական եզրակացությունը տրամադրվում է խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հանձնաժողովին դիմելու օրվանից երկշաբաթյա ժամկետում:

10. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված օրակարգով, որում նշվում են՝

1) հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

2) քննարկման ենթակա հարցերը.

3) քննարկվող յուրաքանչյուր հարցը զեկուցողի անունը, ազգանունը:

11. Նիստի օրակարգն անհրաժեշտ նյութերով հանձնաժողովի անդամներին է ներկայացվում խորհրդատվական եզրակացություն ստանալու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից հանձնաժողովին դիմելու օրվանից մեկշաբաթյա ժամկետում, սակայն ոչ ուշ, քան նիստից երեք օր առաջ:

12. Օրակարգում ընդգրկված հարցի վերաբերյալ նոր նյութեր ստանալու դեպքում դրանք անհապաղ ուղարկվում են հանձնաժողովի անդամներին:

13. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

14. Հանձնաժողովի նախագահի հրավերի հիման վրա հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել այլ անձինք:

15. Յուրաքանչյուր հարցի քննարկման ավարտից հետո հանձնաժողովում տեղի է ունենում բաց քվեարկություն: Հանձնաժողովի անդամը քվեարկում է «կողմ» կամ «դեմ»: Այլ

անձինք չեն կարող ներկա գտնվել տեղի ունեցող քվեարկությանը: Եթե քննարկվող հարցը վերաբերվում է հանձնաժողովի անդամին, ապա տվյալ անձը չի մասնակցում քվեարկությանը:

16. Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Նիստի արձանագրությունն ստորագրում է հանձնաժողովի նախագահը:

17. Հանձնաժողովի նախագահն ընդունված խորհրդատվական եզրակացությունը և նիստի արձանագրությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետին:

18. Հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկված հարցերը և արտահայտված դիրքորոշումները ենթակա չեն հրապարակման: Հանձնաժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության պետական պարգևով կամ պատվավոր կոչումով պարգևատրման առաջադրվող անձի, կոլեկտիվի կամ զորամասի ղեկավարի դիմումի հիման վրա նրան տրամադրում է խորհրդատվական եզրակացությունից քաղվածք:

## IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19. Հանձնաժողովն ընդունում է աշխատակարգային որոշումներ և խորհրդատվական եզրակացություններ:

20. Հանձնաժողովի աշխատակարգային որոշմամբ լուծվում են հանձնաժողովի գործունեության կազմակերպման հետ կապված հարցերը:

21. Հանձնաժողովի աշխատակարգային որոշումներն ընդունվում են հանձնաժողովի նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների մեծամասնությամբ:

22. Հանձնաժողովի խորհրդատվական եզրակացություններն ընդունվում են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է:

23. Ընդունված խորհրդատվական եզրակացությունից տարբերվող դիրքորոշում ունենալու դեպքում հանձնաժողովի անդամը կարող է ներկայացնել հատուկ գրավոր կարծիք:

Հատուկ կարծիքը ներկայացվում է հանձնաժողովի նիստում՝ այն ներկայացնող հանձնաժողովի անդամի ստորագրությամբ և կցվում է արձանագրությանը:

## V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

24. Հանձնաժողովի գործունեությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ներման, քաղաքացիության, պարգևների և կոչումների շնորհման բաժինը (այսուհետ՝ աշխատակազմ):

25. Աշխատակազմը՝

1) ապահովում է հանձնաժողովի կազմակերպատեխնիկական աշխատանքների իրականացումը.

2) հանձնաժողովին է ներկայացնում պետական պարգևներով պարգևատրելու կամ պատվավոր կոչումներ շնորհելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացված առաջարկությունները կամ հայտնում է Հայաստանի Հանրապետության վարչապետի նախաձեռնության մասին՝ փոխանցելով վերաբերելի նյութերը.

3) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրումը և արձանագրությունների պահպանումը.

4) ապահովում է հանձնաժողովի խորհրդատվական եզրակացության փոխանցումը Հայաստանի Հանրապետության վարչապետին.

5) ապահովում է հանձնաժողովի նիստի օրակարգի և նյութերի փոխանցումը հանձնաժողովի անդամներին.

6) կատարում է հանձնաժողովի ընթացիկ գործունեության ապահովմանն ուղղված այլ գործողություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ